# Արձանագրություն N 3

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան                                                                                    << 18>> << 01 >> 2022թ.

**Օրակարգ.**

ՀՀ ոստիկանության կարիքների համար սկուտերների /մոտոցիկլետներ/ ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես. հայտում հրավերով պահանջվող Հավելված 1-ը /դիմում հայտարարություն/ ներկայացվել է թերի /այլ ծածկագրով/ և առանց ստորագրման, չի ներկայացվել Հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/, ինչպես նաև չի ներկայացվել ապրանքի տեխնիկական բնութագիրը:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մասնակից «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին տրամադրել մեկ /1/ մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար:

«ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են՝ Հավելված 1-ը՝ դիմում հայտարարությունը, Հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, լրացվել է տեխնիկական բնութագիրը, սակայն տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի ներկայացված նկարագիրը ամբողջական չէ, քանի որ անհնար է պատկերացում կազմել, թե նշված մակնիշի տեխնիկական սարքը հստակորեն ինչպիսի ցուցանիշներ ունի: Մասնավորապես՝ աշխատանքային ծավալի, հզորության, կախոցների, վառելիքի տարողության և ծախսի, արագության, ինչպես նաև բեռնախցիկի չափի վերաբերյալ շիտակ ցուցանիշների փոխարեն տրված են <<լողացող բնութագրեր>>:

*Հանձնաժողովը որոշեց՝*

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 42-րդ կետի, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման: ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՍԿՈՒՏԵՐ-ՊԾ/2022-Լ-24 ծածկագրով ընթացակարգը համարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետը, «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

***Ընդունվեց որոշում***՝ *կողմ 3 դեմ 0 :*

*Հանձնաժողովի Նախագահ՝*

*ՀՀ Ո ՊԾ տնտեսական բաժանմունքի պետ* — Ա. Ավագյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

*ՀՀ Ո ՊԾ տնտեսական բաժանմունքի առաջատար մասնագետ* — Ռ. Սուքասյան

*ՀՀ Ո ՊԾ տնտեսական բաժանմունքի ճարտարագետ* — Ս. Մանուկյան

*Քարտուղար՝*

*ՀՀ ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող* — Լ. Սահակյան